**ՆԱԽԱԳԻԾ**

**Երկրորդ ընթերցում**

**Լրամշակված տարբերակ**

**Կ-029[1]-17.09.2021-ՏՀ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

# «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի №ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի «գ» կետում «տուժանքները» բառը փոխարինել «պատասխանատվության միջոցները» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 21-րդ՝

1. հոդվածի 1-ին պարբերությունում «Սակագների» բառից առաջ լրացնել «1.» թիվը և կետադրական նշանը.

2. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանելու, պետություն-մասնավոր գործընկերության գործարքները խրախուսելու և սպառողների սակագների վրա հնարավոր բացասական ազդեցություններն էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերին համահունչ մեղմելու նպատակով լիցենզավորված անձանց համար հանձնաժողովը կարող է կիրառել հաստատուն սակագներ կամ սակագնային կարգավորման այլ ձևեր ու մեխանիզմներ:»:

**Հոդված 3.** Օրենքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում հանձնաժողովի կողմից երաշխիքային գումարը (լրիվ կամ մասնակի) պետական բյուջե փոխացելու վերաբերյալ որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձի կողմից նախկինում հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, ներկայացված երաշխիքի գործողության

ժամկետը լրացել է և (կամ) դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը:»:

**Հոդված 4.** Օրենքի 27-րդ՝

1. հոդվածի 3-րդ մասում «ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «իսկ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարքների դեպքում նաև, եթե դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով,

2. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Առանց սույն հոդվածում նշված համաձայնության կնքված կամ դրա կնքմանը համաձայնություն տալու մասին հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմաններին չհամապատասխանող գործարքն առոչինչ է:»:

**Հոդված 5.** Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա1» և «ա2» կետերով.

«ա1) արտադրության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, իսկ այդ մասին վերջինիս հայտնի չլինելու դեպքում՝ այդ մասին տեղեկանալուց հետո 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը.

ա2) արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում)՝ այդ մասին տեղեկանալուց հետո 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին.»:

**Հոդված 6.** Օրենքի 30.1 հոդվածի՝

1. 1-ին մասից հանել «ինչպես նաև» բառերը և «կասեցվելու դեպքում» բառերից հետո լրացնել «ինչպես նաև հանձնաժողովի հաստատած կարգին համապատասխան երաշխիք չներկայացնելու դեպքում» բառերը.

2. 2-րդ մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում հանձնաժողովը կասեցրել է արտադրության լիցենզիան և մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը լիցենզիայի կասեցումը չի վերացվել.».

3. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով.

«ե) արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժշտ իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում՝ (այդ թվում իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) պետական իրավասու մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի կամ համապատասխան պայմանագրի գործողության դադարեցման հիմքով:»:

**Հոդված 7**. Օրենքի 42-րդ՝

1. հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 42. Հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվությունը**

«1. Գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից սույն օրենքի դրույթները, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հանձնաժողովն իրավասու է կիրառելու սույն օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, վերականգնել մինչև խախտումը եղած դրությունը, կատարել դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները:».

2. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ մասով.

«12. Եթե գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պահանջը միաժամանակ սահմանված է և սույն օրենքում, և հանձնաժողովի իրավական ակտում, ապա գործունեության լիցենզիա ունեցող անձի նկատմամբ պատասխանատվության միջոցը կիրառվում է սույն օրենքի պահանջի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:»:

**Հոդված 8**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 1.** «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի~~ն ընդունված~~ №ՀՕ-148~~-Ն~~ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի «գ» կետում «տուժանքները» բառը փոխարինել «պատասխանատվության միջոցները» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 21-րդ՝

3. հոդվածի 1-ին պարբերությունում «Սակագների» բառից առաջ լրացնել «1.» թիվը և կետադրական նշանը.

4. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանելու, պետություն-մասնավոր գործընկերության գործարքները խրախուսելու և սպառողների սակագների վրա հնարավոր բացասական ազդեցություններն էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերին համահունչ մեղմելու նպատակով լիցենզավորված անձանց համար հանձնաժողովը կարող է կիրառել հաստատուն սակագներ կամ սակագնային կարգավորման այլ ձևեր ու մեխանիզմներ:»:

**Հոդված 3.** Օրենքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում հանձնաժողովի կողմից երաշխիքային գումարը (լրիվ կամ մասնակի) պետական բյուջե փոխացելու վերաբերյալ որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձի կողմից նախկինում հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը լրացել է և (կամ) դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը:»:

**Հոդված 4.** Օրենքի 27-րդ՝

3. հոդվածի 3-րդ մասում «ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «իսկ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարքների դեպքում նաև, եթե դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով,

4. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Առանց սույն հոդվածում նշված համաձայնության կնքված կամ դրա կնքմանը համաձայնություն տալու մասին հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմաններին չհամապատասխանող գործարքն առոչինչ է:»:

~~**Հոդված 4.** Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասում «ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «իսկ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործարքների դեպքում նաև, եթե դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը:~~

**Հոդված 5.** Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա1» և «ա2» կետերով.

«ա1) արտադրության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, իսկ այդ մասին վերջինիս հայտնի չլինելու դեպքում՝ այդ մասին տեղեկանալուց հետո 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը.

ա2) արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում իրավունքը հավաստող փաստաթղթի գործո~~ւնեությանը~~ղության ժամկետը չերկարաձգվելու դեպքում)՝ այդ մասին տեղեկանալուց հետո 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին.»:

**Հոդված 6.** Օրենքի 30.1 հոդվածի՝

4. 1-ին մասից հանել «ինչպես նաև» բառերը և «կասեցվելու դեպքում» բառերից հետո լրացնել «ինչպես նաև հանձնաժողովի հաստատած կարգին համապատասխան երաշխիք չներկայացնելու դեպքում» բառերը.

5. 2-րդ մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում հանձնաժողովը կասեցրել է արտադրության լիցենզիան և մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը լիցենզիայի կասեցումը չի վերացվել.».

6. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով.

«ե) արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժշտ իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում՝ (այդ թվում իրավունքը հավաստող փաստաթղթի գործո~~ունեության~~ողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) պետական իրավասու մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի կամ համապատասխան պայմանագրի գործողության դադարեցման հիմքով:»:

**Հոդված 7**. Օրենքի 42-րդ՝

3. հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 42. Հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվությունը**

«1. Գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից սույն օրենքի դրույթները, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հանձնաժողովն իրավասու է կիրառելու սույն օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, վերականգնել մինչև խախտումը եղած դրությունը, կատարել դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված առանձնահատկությունները:».

4. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ մասով.

«12. Եթե գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պահանջը միաժամանակ սահմանված է և սույն օրենքում, և հանձնաժողովի իրավական ակտում, ապա գործունեության լիցենզիա ունեցող անձի նկատմամբ պատասխանատվության միջոցը կիրառվում է սույն օրենքի պահանջի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:»:

**Հոդված 8**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**
**ԱԺ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ**
**«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ**
**ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-029[1] -17.09.2021-ՏՀ-011/1)**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | ***ՀՀ կառավարություն*** | **«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված** | «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «Էներգետիկայի մասին» օրենքի լրիվ անվանման հիշատակումից առաջարկում ենք հանել իրավական ակտի նորմատիվ բնույթին վերաբերող «Ն» տառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 2. | ***ՀՀ կառավարություն*** | **«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով** | Առաջարկվում է «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարեու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով օրենքի 27-րդ հոդվածում «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **փոփոխվող օրենքի 27-րդ հոդված** | կատարելու մասին» օրենքի նախագծի համանմանությամբ լրացնել դրույթով, որի համաձայն՝ առանց այդ հոդվածում նշված համաձայնության կնքված կամ դրա կնքմանը համաձայնություն տալու մասին հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմաններին չհամապատասխանող գործարքն առոչինչ է: | | |
| 3. | | **«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ և 6-րդ հոդվածներով օրենքի համապատասխանաբար 28-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող «ա2» կետ և 30.1 հոդվածի 2-րդ մասում լրացվող «ե» կետ** | Առաջարկվում է «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարեու մասին» օրենքի նախագծի 5-րդ և 6-րդ հոդվածներով օրենքի համապատասխանաբար 28-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող «ա2» կետում և օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասում լրացվող «ե» կետում «փաստաթղթի գործունեության» բառերը փոխարինել «փաստաթղթի գործողության» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |